բեխոսի դիրքով. դէմքը լուրջ, գլխի շուրջը հասարակ լուսոյ պսակ, իսկ ոտքերին փափուկ մաշիկներ։ Յովհաննէս հագել է մինչև բոբիկ ոտները հասնող պարեգօտ և ուսերին ձգել նոյնպէս սպիտակ տոգայ. գլխի մազերը կարճ կտրուած, անմորուս, բոլորակ նիմբուսով. նա ևս ցաւի արտայայտութեան ոչ մի նշան չունի, բայց մտազբաղ։

Աւելի փոքր դիրքով երկու կողմից մի մի ֆիգուր. աջինը հագել է մինչև ծունկները հասնող, բաց կապտաւուն, թեթեւ տունիկայ, գօտկակապի տեղում քիչ ծալուած, նեղ անդրավարտիկով, ծնկներից ցած խրած կոշկի ճիտկի մէջ։ Գլուխը վեր է բարձրացրած, մազերը կարճ, առանց նիմբի. երկու ձեռքով նիզակը բարձրացրել է դէպի խաչեցեալի կողը, որտեղից արիւն և ջուր է ցայտում։ Ձախ ֆիգուրը նոյն զգեստն ունի, միայն տունիկան մութ դոյնի, ոտքի մէկը յետ դրած, ձախ ձեռքին դոյլ, իսկ աջով երկար ձողի գլխին ամրացրած սպունգը բարձրացրած։ Խաչելութեան երկու կողմից բարձրանում է մի մի սրածայր, պայմանական սար, որոնց նմանութիւնը տեսնում ենք և Ժ–ԺԱ. դարի բիւզանդական մանրանկարչութեան մէջ։

Խաչափայտը զարդարուն է սև և սպիտակ շերտերով, վերին թևը խաչաձեւով վերջացած, առանց ցուցանակի. հաստատուած է Գողգոթայի բլրի վերայ, ուր երևում է և Ադամի գլուխը։ Խաչեցեալի թևերը ճկուած են թեթև, բևեռների տեղերից արիւն է ծորում, իրանը թեքուած է քիչ դէպի աջ, ամօթանքը ծածկուած սպիտակ և նուրբ սփածանելիքով. ոտքերն ուղիղ, իրար կողքի բևեռուած են քառանկիւնի և ակներով զարդարուն պատուանդանի վերայ։ Աչքերը բաց են, դէմքն ուղղուած դէպի մայրը, կարճ մորուքով, իսկ գլխի մազերը ուսերին իջած, երկճիւղ. բոլորակ նիմբուսը ականավարդ խաչով։ Յիսուսի դէմքին ցաւի արտայայտութեան նշան չկայ. աջ կողմից գրուած է. «Ահա որդի քո», իսկ ձախից՝ «Ահա մայր քո», համեմատ Յովհաննու ԺԹ. գլխի։ Խաչի հորիզոնական թևերի վերայ գրուած է «Խաչելութիւն». բոլոր գրութիւններն էլ երկաթագրով։ Խաչելութեան հորիզոնական թևերից վեր, աջ և ձախ կողմից երևում են երկու հրեշտակի անդրիներ, սպիտակ տոգայով և տունիկայով, դէմքերն ու աչքերը զարմանքի արտայայտութեամբ, իսկ ձեռները երկիւղածութեան, ականջներին լսելիքի, իսկ ճակատին կապի նշաններով, որ յատուկ է բիւզանդական արուեստին ևս։ Աւելի բարձր՝ աջից արեգակն է, կարճ ճառագայթներով և կիսադէմ պատկերով, իսկ ձախից լրիւ դէմքով լուսինը, բայց աղօտ ճառագայթներով։

Մեր ցուցադրած այս մանրանկարների մէջ համադրուած ձեւակերպութիւնը յարակից է խաչելութեան և խաչից իջեցնելու պատկերագրութեան ամենավաղ ժամանակներից սկսած։ Արեգակի և լուսնի երևոյթը բացառութեամբ Սաբինայի դրան և բրիտանական թանգարանի փղոսկրի տախտակի խաչելութեան՝ նկատւում է ամէն տեղ. նոյն իսկ վերջին պատկերի մէջ նկատուած գնդիկները առիթ կարող են տալ ըստ Կրաուզի կարծելու, թէ արդեօ՞ք արեգակ և լուսին չեն (1)։ Բաբուլայի մանրանկարը, Մոնցայի իւղաշչերի, Ախմիմի ոսկեթերթի, Եգիպտոսի ասեղնեգործի, բրոնզի բուրվառների և այլն խաչելութիւնների մէջ և ապա այնուհետև մինչև ԺԴ. դարի վերջերը՝ քիչ բացառութեամբ՝ խաչելութեան կամ խաչից իջեցնելու պատկերագրութիւնների մէջ նկատելի են այդ երկու լուսաւորները, արեգակը աջից և լուսինը ձախից։ Նրանց երևոյթը քրիստոնէական արուեստի մէջ առնուած է ոչ միայն աւետարանական պատմութեան հետևանքով, այլ և հեթանոսական ազդեցութեամբ. ուստի և, երբեմն, երևան են գալիս իբրև անձնաւորեալ պատկերներ կամ հեթանոսական աստուածութիւններ. այսպէս Ե–Զ. դարի սարկոֆագների, Զ–Է. դարի փղոսկրի քանդակազարդ կազմերի վերայ, որոնցից մէկն է և Էջմիածնի յայտնի աւետարանի կազմը, իսկ մանրանկարչական արուեստի մէջ Թ–Ժ. դարի ձեռագիրներում շատ յաճախ (2)։ Ամենից սովորականը մեր մէջ արեգակի և լուսնի բոլորաձև, խաչաւորած երևոյթն է, իբրև արտայայտութիւն բնութեան տխրու-

(1) Gesch. der Christ. Kurst. I. 173|4։

(2) Kraus. I. 206. II. 339։ Beissel. 248. 300. 314|5։ Pokrowski. Xrist. Iskusst. 67. 185 (պատկ. 137)։